

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԺԹ. ԴԱՐՈՒՄ

Հայ ժողովրդի բնօրրանը Հայկական բարձրաւանդակն է, ուր կազմաւորուել է նա, ուր ընթացել է նրա պատմական կեանքը եւ կերտուել բազմադարեան մշակոյթը:

Տակաւին հնագոյն ժամանակներում (ն. Ք. Ա. հազ. առաջին կէսերին), հայ ժողովրդի կազմաւորման ընթացքում, ձեւաւորուել են մի շարք պատմա-ազգագրական շրջաններ՝ տնտեսա-մշակութային բնորոշ առանձնայատկութիւններով, որոնք հիմնական գծերով պահպանուել են ընդհուպ մինչեւ Ի. դ. սկզբները:

ԺԹ. դ. վերաբերող հարուստ ազգագրական նիւթերը՝ բանահիւսական ու բարբառագիտական, ինչպէս նաեւ մատենագրական նիւթերի հետ համադրելիս, հնարաւոր է դառնում ուրուագծել Հայաստանի հիմնական պատմա-ազգագրական շրջանները՝ տնտեսա-մշակութային բնորոշ տիպերով:

Այդ շրջաններն են ա) Փոքր Հայքը, բ) Ծովք-Աղձնիքը, գ) Տուրուբերանը, դ) Վասպուրականը, ե) Այրարատը, զ) Սիւնիքը, է) Արցախ-Ուտիքը, ը) Գուգարքը, թ) Բարձր Հայքը:

Դրանք հիմնականում կազմուել են Հայկական բարձրաւանդակի գլխաւոր երկրագործա-մշակութային գօտիների շուրջը, տոհմացեղային վաղնջագոյն խմբաւորումների հիմամբ:

Հայկական բարձրաւանդակի վաղագոյն տոհմացեղային կազմաւորումների, առաւել եւս դրանց մշակոյթի իւրայատկութիւնների հետազոտումը, առնչուած հայ ժողովրդի տոհմացեղային կազմաւորման ու մշակոյթի զարգացման մէջ դրանցից իւրաքանչիւրի խաղացած տեղի ու դերի բնութագրման հետ, բարդ ու դժուարին խնդիր է եւ առայժմ նուազ ուշադրութեան արժանացած: Պատմական կեանքի պայմանների առանձնայատկութեամբ է, ըստ երեւոյթին, բացատրուում այն ուշագրաւ հանդամանքը, որ դեռեւս հայ ժողովրդի կազմաւորման արշալոյսին արդէն իրենց կենսունակութիւնը գրեթէ

ամբողջովին կորցրել էին Հայկական բարձրաւանդակում բնակուող տոհմացեղային խմբաւորումները, արագօրէն ձուլուելով հայ ժողովրդի կազմում, մինչդեռ հարեւան երկրներում (մասնաւորապէս Վրաստանում, Ադրբեյջանում) նման խմբաւորումների մնացուկները, որոշակիօրէն ուրուագծուող յատկանիշներով, պահպանուում էին ընդհուպ մինչեւ ԺԹ. դ. վերջերը, որոշ կողմերով՝ նոյնիսկ մինչեւ այժմ:

Այդուհանդերձ, եւ չնայած դարերի ընթացքում օտար տիրապետողների կողմից պարբերաբար կատարուած բռնի տեղահանումներին, զանգուածային արտագաղթերին ու մասնակի ներգաղթերին, մինչեւ Ի. դ. սկզբները դեռեւս պահպանուում էին Հայաստանի հիմնական պատմա-ազգագրական շրջաններն իրենց ենթաշրջաններով, այսինքն վաղուց ի վեր հայացած, տեղական տոհմացեղային յատկանիշները կորցրած, սակայն տնտեսա-մշակութային տիպերի առանձնայատկութիւնները պահպանած ազգագրական մեծ ու փոքր խմբերը, իւրաքանչիւրը կենտրոնացած որոշակի երկրագործա-մշակութային գօտու սահմաններում:

Այսպէս. Փոքր Հայքի պատմա-ազգագրական շրջանը տարածուում էր հարաւից հիւսիս՝ Տաւրոսեան լեռներից մինչեւ Գալլ գետի հովիտը, արեւմուտքից-արեւելք՝ Կապադովկիայից մինչեւ Մեծ Հայքի սահմանները, ներառելով Առաջին Հայքը եւ Երկրորդ Հայքը:

Փոքր Հայքին հարաւ-արեւելքից յարում է Ծովք-Աղձնեաց պատմա-ազգագրական շրջանը, որն ընդգրկելով Արածանի գետի ստորին հոսանքը, Եփրատ գետից ձգւում է գրեթէ մինչեւ Վանայ լիճը:

Եփրատի վերին հոսանքն ամբողջութեամբ, սկսած Փոքր Հայքի հիւսիս-արեւելեան սահմաններից մինչեւ Արարատի ազգագրական շրջանը, բռնում է Բարձր Հայքի պատմա-ազգագրական շրջանը, ներառելով նաեւ Կարնոյ, Բասենի, Վանանդի ու Շիրակի բարձրաւանդակները:

Հայկական բարձրաւանդակի գրեթէ կենտրոնում է ընկած Տուրուբերան-Տարօնի պատմա-ազգագրական շրջանը, բռնելով Արածանի վերին հոսանքն ու Վանայ լճի հիւսիս-արեւմտեան ափերը, արեւելքում ներառելով նաեւ Բագրեւանդ ու Կոգովիտ գաւառները, ընդհուպ մինչեւ Մասիս լեռան փեշերը:

Վասպուրականի պատմա-ազգագրական շրջանը բռնում է Վանայ լճի արեւելեան մասերը՝ ընդհուպ մինչեւ Կապուտան լիճը, եւ ձգուելով դէպի հիւսիս-արեւելք, մի կողմից յարում է Արարատին, միւս կողմից՝ Սիւնիքին:

Արարատեան պատմա-ազգագրական շրջանը բռնում է Արաքս գետի վերին հոսանքը, տարածուելով ընդհուպ մինչեւ Մասսեաց լեռ-

ների ստորոտները: Գուգարքով՝ հիւսիս-արեւելքից, Արցախ-Ուտիքով՝ արեւելքից, իսկ Սիւնիքով՝ հարաւ-արեւելքից ամբողջանում են Հայաստանի պատմա-ազգագրական շրջանները: Սիւնիքն ու Արցախը հարաւից ու արեւմուտքից սերտորէն յարում են Սեւանայ լճին: Արաքսի, Եփրատի վերին հոսանքների, Արածանիի արգաւանդ հովիտներում եւ Վանայ ու Սեւանայ լճերի աւազաններում, այսինքն՝ Հայկական բարձրաւանդակի գլխաւոր երկրագործա-մշակութային գօտիների շուրջն են գոյացել նախահայկական եւ հայկական տոհմա-ցեղային ու պետական կազմաւորումները, դարեր ի վեր դրանք եղել են Հայ մշակոյթի կենտրոնները¹: Այս հարցերի վերաբերեալ բաւականաչափ նիւթեր են տալիս հնագիտական ու մատենագրական աղբիւրները, որոնք եւ հանգամանորէն ուսումնասիրուած են հայագէտների կողմից: Ինչ վերաբերում է բուն ժողովրդային մշակոյթին, որի հետազօտութեան հիմնական աղբիւրն ազգագրական նիւթն է, ապա այն դեռեւս կարիք ունի մասնագիտական համակողմանի ուսումնասիրութեան: Ազգագրական նիւթերով երբեմն շատ յստակօրէն ուրուագծւում են տնտեսա-մշակութային տիպերի տարածման, դրանով իսկ՝ պատմա-ազգագրական շրջանների որոշման սահմանները: Այս առումով ուշադրութեան են արժանի յատկապէս նիւթական մշակոյթին (առաւելապէս ժողովրդական բնակարանին ու տարագին) վերաբերող հարուստ նիւթերը:

Հայ ժողովրդի նիւթական մշակոյթի մեջ ուրոյն տեղ է բռնում գիւղական բնակարանի համալիրը: Բնակարանի «գլխատան» տիպը՝ համընդհանուր լինելով ամբողջ Հայկական բարձրաւանդակին², առանձին ազգագրական շրջաններում ունի իւրատիպ տարբերակներ, պայմանաւորուած իւրաքանչիւր շրջանի աշխարհագրական, բնակլի-

¹ Հայ մշակոյթի խոշոր կենտրոն է եղել նաեւ Կիլիկեան Հայաստանը, ուր շուրջ 300 տարի (1080-1375թթ.) գոյութիւն է ունեցել հայկական պետականութիւն եւ ուր հայերը հոծ զանգուածներով ապրում էին մինչեւ Ի. դ. սկզբները: Հայ ժողովրդի մշակութային կենքում կարեւոր դեր են խաղացել նաեւ արտասահմանեան զանազան երկրներում տարբեր ժամանակներում կազմուած Հայ գաղութները (Սփիւռք), սակայն սրանց ազգագրական բնութագրութիւնը դուրս է տուեալ յօդուածի նպատակից:

² ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆՑ Փ., Հայ գիւղական տունը, Վիեննա, 1894; Раздел "Армяне" тома Народы Кавказа /ч. П./ серии "Народы мира", М., 1962, С. Д. Лисициан, Очерки этнографии дореволюционной Армении. "Кавказский этнографический сборник", 1, М., 1955; ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ ՍՏ., Հայաստանի գիւղական բնակավայրերի ֆարտարապետութիւնը, Երեւան, 1956;

մայական եւ տնտեսական ու պատմական գործօնների իւրայատկութիւններով: Ընդհանուր առմամբ, գլխատունը բնակարանի մի տիպ է, որը յատուկ է նստակեաց, արդիւնաւէտ բնափակ երկրագործական-անասնապահական-այգեգործական տնտեսութիւն վարող ժողովրդին, որպիսին հնագոյն դարերից ի վեր եղել է հայ ժողովուրդը: Իր աւարտուն եւ կատարեալ ճարտարապետական կառուցուածքով ու ձեւաւորմամբ յայտնի է Բարձր Հայքի գլխատունը, որը համեմատաբար լաւ է հետազօտուած եւ որը յայտնի է նաեւ «հազարաչէն տուն» անուանմամբ: Դա միայրակ գմբէթարդ շէնք է, գրեթէ մի ծածկի տակ առնուած բնակելի եւ օժանդակ տնտեսական յարակից շէնքերի մի ամբողջական ու բարդ համալիրով: Ժողովրդական տան սոյն համալիրը լիակատար կերպով յարմարեցուած է բարձրադիր լեռնային խստաշունչ պայմաններում երկրագործական-անասնապահական տնտեսութիւն վարելուն եւ ընտանեկան համայնքի (գերդաստան) յարմարաւէտ բնակութեանը: Սոյն համալիրի հիմնական բաժանմունքը յաճախ կիսագետնափոր. ամրապինդ հիմնապատերով կառուցուած, ընդարձակ (մինչեւ 60-80 ք.մ. տարածութեամբ) քառանկիւն բնակարանն է, հազարաչէն ծածկով, որը կազմում է սովորաբար պատերին զուգահեռ գցուած գերանների վրայ շեղակի անկիւնային կառուցապատման միջոցով գմբէթաւոր տանիք ձեւաւորելով: Բուն բնակարանին պատակից են լինում մառանն ու գոմերը, ըստ որում, մառանը ետնամուտքով, փոքր դռնով անմիջապէս հաղորդակցւում է տան հետ, իսկ գոմերն ընդհանուր շքամուտքի՝ ծածկուած բակի միջոցով են միայն հաղորդակցւում տան հետ: Սրան բնորոշ է գոմի մի բաժինը հանդիսացող սենեակը (օդան), որն անասնապահ տրամադրկանց ձմեռային կացարանն է (իսկ ձմեռն այստեղ տեւում է շուրջ 5-6 ամիս) եւ միաժամանակ՝ հիւրասենեակ: Մինչդեռ տունը, կից մառանով, կանանց տրամադրութեան տակ է, ուր նրանք զբաղւում են տնային տնտեսութեամբ ու տնայնագործութեամբ: Տղամարդիկ, անասնապահութիւնից բացի, զբաղւում են արդիւնագործութեամբ եւ արհեստներով, յատկապէս այդ նպատակին ծառայող ընդարձակ ծածկուած բակում³:

Բնակարանի այս տիպը տարածւում է Եփրատի վերին հոսանքից դէպի հիւսիս-արեւելք, ընդհուպ մինչեւ Փոքր Կովկասեան լեռներ:

ՎԱՐԴԱՆԵԱՆ Ա., Հայկական ժողովրդական քնակելի տների ֆարտաբալետութիւնը, Երեւան, 1959; ՊԱՊՈՒԽԵԱՆ Ն., Սիւնիքի ժողովրդական քնակարանի ֆարտաբալետութիւնը, Երեւան, 1972:

3 Ст. Лисициан, Крестьянские жилища Высокой Армении.- "Изв. Кавказского историко-археологического ин-та, т. IV, Тифлис, 1926.

ըը եւ, հայերից բացի, ընդհանրացուած է Ախալքալաքի, Ախալցխայի ու դրանց յարող շրջանների վրացիների մէջ եւս:

Բնակարանի սոյն տիպի համեմատաբար պարզ տարբերակը յատուկ է եղել Տուրուբերանի, ինչպէս նաեւ Ծովք-Աղձնիքի ազգագրական շրջաններին, որոնք ձգւում են Հայկական Տաւրոսից մինչեւ Հայկական Պար լեռները: Այս տարբերակը, սկսած 1830-ական թուականներից, ընդհանուր տարածում է գտել Սիւնիքի ազգագրական շրջանի Գեղարքունիքի ենթաշրջանում եւ Այրարատի ազգագրական շրջանի Արագածոտնի ենթաշրջանում՝ համապատասխան ազգագրական խմբերի տեղափոխութեան հետեւանքով: Այս ամէնից անհամեմատ լաւ է հետազոտուած Գեղարքունիքի բնակարանը⁴, որի միջոցով էլ հնարաւորութիւն է ընձեռւում գաղափար կազմելու առհասարակ Տուրուբերանի ազգագրական շրջանի բնակարանի մասին:

Տուրուբերանին հարաւ-արեւելքից յարող Վասպուրականի ազգագրական շրջանը (որը բիայնական-ուրարտական պետութեան կենտրոնն է եղել), Ժողովրդական բնակարանի մշակոյթով մի կողմից՝ Շատախ-Մոկս-Սասուն գծով կապւում է Տուրուբերանի ու Աղձնիքի հետ, միւս կողմից, Նախճաւանի ենթաշրջանի միջոցով՝ Այրարատի ու Սիւնիքի հետ⁵: Վասպուրականին բնորոշ է Հայոց-ձորի կենտրոնական ենթաշրջանը (Վան քաղաքն իր շրջակայքով), ուր բնակարանը երկյարկանի տափակ կտուրով է, առաւել յարմարեցուած այգեգործական-երկրագործական տնտեսութեանը, մինչդեռ բարձրադիր լեռնային մասերում, ինչպիսին Շատախն է, այն պարզունակ գետնափոր է, յարմարեցուած անասնապահական տնտեսութեանը⁶ եւ իր տիպով աւելի մօտ է հարեւան Սասունի բնակարանին: Ուրոյն տեղ է բռնում Փոքր Հայքի բնակարանի մշակոյթը, որը Եփրատի միջին հոսանքից ձգւում է մինչեւ Գամիւրք (Կապադոկիա): Այն բնորոշւում է հիմնականում բակը պարսպապատ երկյարկանի տներով, որոնց ստորին յար-

4 Տ. Лисициан, Нор-Баязетский азарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов Памбакского и Даралагезского, там же, т. VI.

5 ՀԱՆԱՋԵԱՆ ԳԵՈՐԳ, Դերսիմի հայերի ազգագրութիւնը, մ. Ա.- Հայ ազգագրութիւն եւ բանահիւտութիւն (այսու՝ ՀԱԲ), սրակ 5, Երեւան, 1973. ԱՌԱՔԵՆ Ն. ՊԱՏՐԻԿ, Պատմագիրք յուշամատեն Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, հ. Ա., Պէյրուս, 1974, հ. Բ., Նիւ Ջրքի, 1983. ԶԵՐԳԵՋԵԱՆ Կ. Հ., Աֆիոն-Կարահիսարի գաղթօջախը (պատմագագաղական ակնարկ), Երեւան, 1986. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Ե., Սասուն (ազգագրական նիւթեր), Երեւան, 1963:

6 Տ. Лисициан, Историко-этнографические очерки Шатаха /из материалов по изучению жилищ Армении/, там же, 1927, т. V.

կերը ծառայում են որպէս տնտեսական օժանդակ շէնքեր (գոմ, ախոռ եւ այլն), վերին յարկերը՝ բնակարաններ, իսկ տանիքները՝ գիւղատնտեսական միջերկրների չորանոցներ ու պահեստներ⁷:

Սիւնիքի, Արցախ-Ուտիքի, Գուգարքի պատմա-ազգագրական շրջանների բնակարաններն ունենալով դրանցից իւրաքանչիւրին բնորոշ տեղական իւրայատկութիւններ, ընդհանուր առմամբ նախորդներից տարբերուում են հիմնականում այն բանով, որ այստեղ բնակելի եւ օժանդակ շէնքներն առանձնացուած են միմեանցից եւ դրանք իրար հետ յարակցւում են բաց բակի միջոցով, մինչդեռ նախորդ շրջանների բնակելի եւ տնտեսական շէնքների համալիրները մի ամբողջութիւն են կազմում եւ միմեանց հետ հաղորդակցւում են ծածկուած բակի մէջ առնուած բաժանմունքների կցապատերում բացուած դռնակներին (ակնատ, դրիճակ) միջոցով: Սիւնիքին ու Արցախին բնորոշ են նաեւ ժայռափոր բնակարաններն ու տնտեսական օժանդակ շէնքերը՝ կամարակապ տանիքներով, համակցուած սողոմաքաշ (հազարաշէնի պարզ տարբերակը) տիպով կառուցապատուած յաւելեալ սենեակներով: Այս կերպ կառուցապատուած մի շարք գիւղեր ներկայումս էլ գոյութիւն ունեն Սիւնիքում (Գորիսի շրջանի Խնձորեսկ, Շինուհայր, Վերին Շեն, Տեղ, Հալիձոր եւ այլ գիւղերը): Դրանք, պաշտպանական նկատառումներով, կառուցուած են անդնդախոր ձորերի ժայռաքերձերում (բարբառում կոչւում են «քերծի տօն») եւ անմատչելի են եղել թշնամիներին: Արցախի հայերի բնակարանը, որը նրանց միջոցով ընդհանրացուած է նաեւ տեղի աղբեջանցիների ու քրդերի մէջ, հանգամանօրէն հետազօտուած է⁸: Գուգարքին բնորոշ է Լոռու միկրոշրջանի բնակարանը, որն ըստ էութեան նման լինելով Սիւնիքի եւ Արցախի բնակարաններին եւ ունենալով նոյն բաժանմունքները, վերջիններից տարբերուում է կառուցապատմամբ, այսինքն՝ ոչ թէ ժայռափոր, այլ կիսագետնափոր է եղել: Ի տարբերութիւն Բարձր Հայքի բնակարանի, Գուգարքին, համեմատաբար մեղմ կլիմայի շնորհիւ, ունեցել է առջեւից սիւնաշար պատշգամբաձեւ ընդարձակ սրահ (սհար), որը տնա-

7 ԼԻՍԻՑԵԱՆ ՍՏԵՓԱՆ, Զանգեզուրի հայերը, Եր., 1969. ԹԵՄՈՒՆԻՃԵԱՆ Վ., Գալիքի հայերը (պատմագագրական ուսումնասիրութիւն), ՀԱՐ, Եր., 1970.

8 Ст. Лисициан, К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам), Изв. КИАИ, 1925, т. III. В. Кобычев, Жилища народов Восточного Закавказья в XIX в.- Сов. этнография, 1957, 3; Լալայեան Ե., Բորչալուի գաւառ. -Ազգագրական հանդէս, VII եւ VIII գրքեր, Թիֆլիս, 1901, IXգ., 1902, X գ., 1903.

յին տնտեսութիւնը վարելու կարեւոր բաժանմունքներէից է եղել⁹:

Այրարատի պատմա-ազգագրական շրջանի ժողովրդական բնակարանը բոլորովին այլ տիպի է՝ տափարակ տանիքով, հացատունը, հնձան-մառանն առանձնացուած բնակելի տնից, բացի այդ բոլորը, պաշտպանական նկատառումներով, առնուած բարձր պարիսպների մէջ՝ ճարտարապետօրէն՝ ձեւաւորուած դարպաս-շքամուտքով: Այստեղ շէնքերի՝ փողոցին նայող պատերը գրեթէ խուլ են եղել, առանց լուսամուտների, շէնքերի ճակատները նայել են բակին, որն ամուր շրջափակուած լինելով, ծածկուած էի եղել եւ ուր կենտրոնացուել են գրեթէ ամբողջ տնտեսական գաղմուկները՝ մրգեղէնի վերամշակումը, հաց թխելը, ճաշ եփելը եւ այլն: Եթէ Բարձր Հայքի տիպով բնակելի եւ տնտեսական օժանդակ շէնքերը հիմնականում յարմարեցուած են եղել անասնապահական-երկրագործական տնտեսութեան վարմանը եւ բարձր լեռնային խտաշունչ կլիմային, ապա Այրարատում դրանք յարմարեցուած են խաղողա-այգեգործական-երկրագործական տնտեսութեան վարմանը եւ տեւական շոգ կլիմային:

Այսպիսով, հայկական ժողովրդական բնակարանի՝ գլխատան, տարբերակների համակարգուած բնութագրութիւնը հնարաւորութիւն է ընձեռում ուրուագծելու ոչ միայն հիմնական պատմա-ազգագրական շրջանների, այլ երբեմն նոյնիսկ ենթաշրջանների մշակութային իւրայատկութիւնները: Գրեթէ նոյնանման դասակարգման են ենթարկւում նաեւ հայ ժողովրդի նիւթական մշակոյթի միւս բնագաւառներին վերաբերող նիւթերը, որոնցից այս առումով վերջին շրջանում ուսումնասիրուած են երկրագործական ու անասնապահական մշակոյթը¹⁰, տնայնագործութիւնը, որոնց տիպերի տարածման արեալները (կենսատարածքները) գրեթէ համընկնում են բնակարանի տիպերի տարածման արեալին: Այդ ամէնի յետագայ բազմակողմանի ու բաղդատական հետազոտմամբ միայն հնարաւոր է ամբողջական գաղափար կազմել հայերի առանձին ազգագրական խմբերի ստեղծած մշակոյթի, դրանով իսկ հայոց ազգային մշակոյթի ժողովրդական ակունքների վերաբերեալ:

ՊՐՈՖ. ԴԵՐԵՆԻԿ Ս. ՎԱՐԴՈՒՄԵԱՆ

⁹ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ Դ., Լոռեցիների նոր կենցաղը, Երեւան, 1956:

¹⁰ ԲՐՈՅԵԱՆ Վ. Հ., Նրկագործական մշակոյթը Հայաստանում, Եր., 1972, ԵՍ. Ի. Մկրտչյան, Փորմեր անասնապահութեան արեւելեան Արմենիայում.- ՀԱԲ, 6, Եր., 1974:

Սկզբնաղբերները բազմաթիւ են, այստեղ բերուած են ամենակարեւորները:

The Nature of the Main Ethnographical Regions of Armenia in the XIX Century

(Summary)

Derenik S. Vardoumyan (Professor)

A long time ago (in the first half of the first century A.D.) a series of historical and ethnographical regions were formed on the Armenian plateau, with characteristic socio-economic peculiarities, which were preserved till the beginning of the XX century. Those regions were Pokr Hayk, Tsopk-Aghdznik, Tourouberan, Vaspourakan, Ayrarat, Syounik, Artsakh-Vayk, Gougark and Partsr Hayk. They were formed mainly around the agricultural belts of the Armenian plateau, established by groups of very ancient tribes and nations.

Ethnological material (taking into account archeological, bibliographical and dialectological data) describes the spread of different types of socio-economic cultures, thereby outlining the different historical and ethnological regions. In this regard, the rich data regarding material culture (especially popular dwellings and costumes) is of particular interest. Thus, the "glkhatoun" type had its own creative versions in separate ethnological regions - "hazarashen", so-ghomakash", cave, open yard, underground, two-story (fortress), and so on, each adjusted to the climatic conditions of its region and to its kind of agro-economic culture (metallurgical, horticultural, animal husbandry).

It is only possible to have a complete picture regarding the origins of the culture of the Armenian ethnos by the multi-sided separate study of the culture of Armenian ethnological groups and regions.